ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/119

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 մարտի 2025 թ. N 119

«ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ**
Գործունեության հասցեն՝ **ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Ուսանողական թաղամաս 4**
Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2/երկու/ տարի ժամկետով, 21 հուլիսի 2022 թ. N 69**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի մարտի 1-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱՊԷՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 21 նոյեմբերի 2023 թ.
ինքնավերլուծության ներկայացում՝ 26 ապրիլի 2024 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 10-12-ը հունիսի 2024 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 19 սեպտեմբերի 2024 թ.
թերությունների վերացման նախնական
ծրագրի ներկայացում՝ 11 հոկտեմբերի 2024 թ.

ԱՊԷՔ ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Արմենուհի Սարգսյան**- Շիրակի պետական համալսարանի դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Գայանե Համբարձումյան**- Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն, փորձագիտական խմբի անդամ:
- **Օլեգ Գրորգյան** - ՀԱՊՀ Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի Գիտական, գիտատեխնոլոգիական համագործակցության և արտաքին կապերի գծով տնօրենի տեղակալ, փորձագիտական խմբի անդամ:
- **Լիլիթ Նզարյան** - Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի Հաշվապահական հաշվառում մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող-անդամ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Չի բավարարում
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԱՊԷՔ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **ԱՊԷՔ-ում առկա են բարելավման կարիք ունեցող խնդիրներ, որոնք վերաբերվում են որակավորումների արժանահավատ շնորհման գործընթացին:**

Քոլեջում իրականացվում է միջին մասնագիտական կրթություն 7 մասնագիտություններով և արհեստագործական ուսուցում 1 մասնագիտությամբ: Կրթական ծրագրերը վերանայումները պարբերական և պլանավորված չեն: Հիմնական վերանայումները կապված են սահմանափակվում են կանոնակարգային փոփոխություններով, իսկ ՄԿԾ-ների վերաբերյալ վերլուծություններ չեն

իրականացվել: Արտաքին և ներքին շահակիցների մասնակցությունը կրթական ծրագրերի բարելավման գործընթացում չի ապահովվել, ինչպես նաև չի կատարվել համեմատական վերլուծություն (բենչմարքինգ): Իրականացվող կրթական ծրագրերը և պրոֆեսորադասախոսական կազմը հիմնականում ապահովում են տեսական գիտելիքներով շրջանավարտների պատրաստումը: Գործնական պարապմունքների և կազմակերպություններում պրակտիկայի իրականացման մասով առկա են թերություններ, որոնց վերացումը պետք է լինի ՄՈՒՀ-ի հիմնական խնդիրներից մեկը:
Քոլեջում առկա նյութատեխնիկական բազան բավականին հին է:

2. *Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են*

Քոլեջն առաջնորդվում է ռազմավարական ծրագրով: Չնայած ռազմավարական ծրագրի առկայությանը, դրա նպատակներն ու խնդիրները լիարժեքորեն չեն իրագործվում կապված մարդկային և նյութական ռեսուրսների սղության հետ: Ֆինանսական միջոցների և եկամուտների ոչ պլանավորված լինելը ստեղծում է կայունության ռիսկեր, ինչը պահանջում է ֆինանսական հոսքերի դիվերսիֆիկացիա՝ ապահովելու ռեսուրսների արդյունավետ կառավարումը: Տվյալների հավաքագրման մեխանիզմներ առկա են, սակայն դրանք չեն կիրառվում համապարփակ վերլուծության և հիմնավորված որոշումների ընդունման համար: Ռիսկերի վերհանման և ներքին ու արտաքին գործոնների վերլուծության համար գործիքակազմ մշակված չէ, ինչը սահմանափակում է ռազմավարական կառավարման արդյունավետությունը:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական/ ստեղծագործական գործունեությունն դեռևս միտված չեն որակավորումների արժանահավատ շնորհմանը*

Քոլեջում հետազոտական և ստեղծագործական գործունեությունը, միջազգայնացումը առաջնահերթություն չեն համարվում: Հետազոտության և միջազգայնացման ոլորտում կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորում չի իրականացվում: ՄԿԾ-ներում սահմանափակ է հետազոտական հմտություններ ձևավորող առաջադրանքները: Քոլեջի ներգրավվածությունը միջազգային գործընթացներում պասիվ է: Քոլեջը համագործակցում է տեղական ընկերությունների հետ՝ միայն պրակտիկաների անցկացման նպատակով: ՀՀ մի քանի բուհերի հետ կնքվել են հուշագրեր:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման քոլեջի կողմից ներկայացված ծրագրի որոշ կետեր իրատեսական են և ռիսկեր չեն պարունակում: Փորձագիտական խմբի բոլոր խորհրդատվությունների իրականացման դեպքում կբերեն որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել 4 /չորս/ տարի պայմանով ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի հետո իրականացնել փորձաքննություն:**
2. Կառավարման խորհրդի հետ քննարկել փորձագիտական խմբի կողմից նշված խնդիրների հրատապ լուծումների ճանապարհները՝ դիտարկելով Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանին միանալու հնարավորությունը, առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

Հատուկ ուշադրություն դարձնել.

- ռազմավարական նպատակների ու խնդիրների համապատասխանեցմանը քոլեջի առաքելությանը, աշխատաշուկայի պահանջներին, ռազմավարական նպատակներին հասնելու մեխանիզմների մշակմանը և կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը,

- կրթական ծրագրերի, դասընթացների բովանդակության բարելավմանը, կարողությունների և հմտությունների զարգացմանը, հաշվի առնելով աշխատաշուկայի ու միջազգային պահանջները,
- տվյալների հավաքագրման, վերլուծության գործընթացների բարելավմանը, քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների վերհանմանը,
- դասախոսական կազմի կատարելագործման և առաջընթացի ապահովման գործուն մեխանիզների ներդրմանը՝ ելնելով ռազմավարական նպատակներից և կրթական կարիքներից,
- հետազոտության և արտաքին կապերի ուղղությամբ իրագործելի ռազմավարական նպատակներ սահմանելուն՝ ուղղված կրթական ծրագրով նախատեսված արդյունքների և կարիքների ապահովմանը, ֆինանսական մուտքերի բազմազանեցմանը, ռեսուրսների և քոլեջի զարգացմանը,
- հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը, գործնական հմտությունների ձեռքբերմանը,
- ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը

3. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերջնական ծրագիրը և համապատասխան ժամանակացույցը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին մեկ տարի հետո պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԱՊԷՔ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ Վ. Գաբրիելյան

2025 թ., մարտի 1